



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2025 թվականի N 1393-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 80-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 26-ին Ալավերդու համայնքապետարանում տեղի ունեցած գույքի աճուրդի մասին թիվ 1 արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Ալավերդի համայնքի Ախթալա քաղաքի Աբովյան փողոց, 17 հասցեում գտնվող, 292.3 քմ ներքին մակերեսով հասարակական նշանակության վարչական շենքը և դրա սպասարկման և պահպանման համար զբաղեցրած 0.0137 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11072025-06-0093)՝ 4 435 000 (չորս միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ արժեքով վաճառել 2025 թվականի օգոստոսի 26-ին Ալավերդու համայնքապետարանում կայացած աճուրդի /լոտ 1-ի/ հաղթող Հովհիկ Ռուդիկի Մարգարյանին:

2. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

1) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, նրանց հետ կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

2) Աճուրդում հաղթած անձի (անձանց) հետ պայմանագիր կնքելիս նրանց մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքվող պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

3) Համաձայն «ՔԾՓԿ» ԲԲ ընկերության կողմից 30.08.2024թ. տրված շինության տեխնիկական վիճակի մասին N 15/252 եզրակացության, 0.0137 հա մակերեսով հողամասում գտնվող վարչական շենքը բարոյապես մաշված է, ուժեղացում-վերականգնումը տեխնիկոտնտեսապես նպատակահարմար չէ և շենքը ենթակա է քանդման, հետևաբար օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն պայմաններ այն մասին, որ երկու տարվա ընթացքում գնորդի կողմից կատարվեն շենքի ուժեղացման, վերականգնման կամ քանդման աշխատանքներ:

4) Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

3. Պայմանագիր կնքելուց կողմերից մեկի խուսափելու դեպքում մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից խուսափելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

